ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Հայկական կարպետագործության պատմություն.

Դերն ու նշանակությունը

Հեղինակ՝ Ասլանյան Սիլվա

Ղեկավար՝ Լիլիթ Իսկոյան /մանկ. գիտ. թեկ., դոցենտ/

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…….3

ԳԼՈՒԽ 1.

ԿԱՐՊԵՏԱՆԱԽՇԵՐԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ……...…….7

1.1Կարպետի տեսակները……...11

1.2 Կարպետների կիրառական նշանակությունը…… …..22

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……...27

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……..…….28

ՀԱՎԵԼՎԱԾ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կարպետագործությունը հայ ժողովրդի հնագույն ու սրիված արհեստներից է: Այն իր ուրույն տեղն է գրավել մշակույթի համընդհանուր գանձարանում, մշակվել, պահպանվել ու կատարելության է հասել հայուհիների շնորհքի ու կարողությունների շնորհիվ: Այդ գեղջկական պարզ գործվածքը մատչելի էր սոցիալական բոլոր խավերին:

Թեմայի արդիականությունը: Կիրառական արվեստի հարուստ ճյուղերից է կարպետագործությունը:Կարպետ հյուսել են բոլորը՝մեծից փոքր: Հյուսել են բնակարաններում, ցուրտ խրճիթներում: Հյուսելիս իրենց հոգսերն են կիսել ճախարակի,իլիկի հետ և վարժ ձեռքերի արագ շարժումներով ստեղծել նրբահյուս կարպետներ: Կարպետագործությունը հայկական բազմադարյան ավանդական արվեստների մեջ իր ուրույն և կայուն տեղն ունի: Գյուղերում աղջիկները դեռ վաղ հասակից նստել են տորքի առջև,յուրաքանչյուրն իր օժիտի համար հյուսել է կարպետահյուս խուրջիններ ու աղաքսակներ,անկողնապարկ ու տաշտի մեզար, գդալաման ու վարագույր: Օժիտը կազմող հյուսվածքները խոսում էին հարսի շնորհքի և ունակությունների մասին:Կարպետը զարդարել է բնակարաններն ու եկեղեցիները, ունեցել է պաշտպանիչ դեր, ցրտից պաշտպանել է մարդկանց և գործածվել որպես հանդերձանք: Կարպետները ծառայել են տարբեր նպատակների և ունեցել են տարբեր անուններ: Մեզարներն օգտագործվում էին հաց թխելիս, ջեջիմը ծառայում էր որպես փռոց: Խուրջինը եղել է տարբեր չափսերի:Ամենամեծն իշախուրջինն է, որի մի աչքում տեղավորվում էին խնոցին, մյուսում՝ կաթսան կամ այլ իրեր: Անկողնապարկն օգտագործվել է հագուստ, անկողին, գորգ, կարպետ փոխադրելու համար: Աղաքսակներում պահել ու սար են տեղափոխել երկանքով աղացած աղը: Նման ձևով աղը պահպանել են խոնավությունից: Գդալ-ամանները խոհանոցի անհարժեշտ մասն են կազմել, որի աչքերում կարելի էր տեղավորել 50-100 գդալ:

Օտար և հայկական աղբյուրները որքան էլ սակավ, այնուամենայնիվ վկայում են , որ կարպետագործությունը Հայաստանում հնուց ի վեր եղել է,գեղեցիկ ու թանկարժեք զարդարանքի բնագավառում:

Ղ.Ալիշյանը վկայում է նաև, որ XIV Պրյուժի մեծ եկեղեցու հրապարակի վրա հայերը գորգ էին վաճառում: Ըստ երևույթին, միջին դարերում կարպետ էր կոչվում ոչ միայն առանց խավի գործվածքը, այլև խավ ունեցող գորգը: Հետագայում գորգ բառի փոխարեն գործածվել են խալի և խալիչա բառերը, որով առաջացել է <<կարպետ>> ու <<խալիչա>> հասկացությունների շփոթում:

Պատմական ակնարկ-Բրդյա, վուշե, բամբակյա, մետաքսյա թելերից հյուսված հաստ, գույնզգույն, նախշազարդ գործվածքները բաժանվում են երկու հիմնական տեսակների՝կարպետ և գորգ: Կարպետը և կարպետային իրերը գործում են առանց խավի: Հայ գրականության մեջ կարպետ բառը նաև գորգի հոմանիշ է եղել: Կարպետ բառը նույն ձևով (carpet) անցել է եվրոպական մի շարք լեզուներին: Հայ

մատենագրական աղբյուրներում գործվածք-փռոցները մի քանի անուն ունեին՝անկված, ակումբ, տապաստակ, արկանելի, բազմական, օթոց, գորգ, խալի, խալիչա, կարպետ: Ժողովուրդը գործածում է կարպետ-ձունձ բառը: Հանդիպում ենք նաև քուրձ, ձորձ, փալաս անուններին: Վերջին բառը որպես անխավ գործվածքի հոմանիշ, անցել է ռուսերենին (палас): Հայերը փալաս էին համարում ամենահասարակ փռոցը:

Մարդկությունը դեռևս շատ հին ժամանակներից է խոտերից, եղեգնից, ճյուղերից, տերևներից, փսիաթ (խսիր), հանդերձանք հյուսել-պատրաստել: Այդ ճանապարհով էլ ծնվել ու զարգացել է ջուլհակությունը-ոստայնանկությունը: Մեր օրերում էլ շատ երկրներում դեռևս մատներով հյուսում են գունագեղ փսիաթներ, կողովներ: Ցորենի ցողուններից, ուռենու ճյուղերից հյուսում են զամբյուղ, սալա, զանազան կողովներ, որոնք իրենց հյուսման տեխնիկայով մոտ են կարպետագործության անհամեմատ բարձր արվեստին: Հնագիտական պեղածո նյութերը վկայում են, որ Հայաստանում կարպետագործությամբ զբաղվել են դեռևս Ք.ա.III հազարամյակում:

Քանի որ գործվածքները կենցաղում հազարամյակներ դիմանալ չէին կարող, իրական պատկերը ծագման ժամանակի վերաբերյալ ամբողջական չէ, տեղեկությունները սուղեն ու թերի: Շատ հավանական է, որ այդ կարքի գործվածքներն ավելի վաղ են պատրաստվել, որովհետև եթե Ք.ա.III հազարամյակում հայերը ներկատու բույսեր էին մշակում ու ներկ պատրաստում (ըստ հնագետ Գ.Արեշյանի), պետք է ենթադրել, որ ոստայնանկությունն էլ գոյություն ուներ:

Հայաստանում ամենահին գործվածքները գտնվել են Արթիկի հնագույն դամբարանից (Ք.ա.XIV-IXդդ): ՈՒշագրավ են գործվածքի վրայի նախշերը՝կեռ խաչաձևեր, S-աձև պատկերներ, կեռ գծեր, որոնք այսօր էլ գործվում են հայկական գորգերի, կարպետների, իսկ մինչև XXդարի սկիզբը՝անկողնակալների, խուրջինների, ձիերի ծածկոցների վրա: Վերոհիշյալ նախշերը դարից դար անփոփոխ եկող գորգանախշերի թվին են պատկանում, ինչպես կենաց ծառի մի քանի պատկերներ: Թեյշեբանիի (Կարմիր բլուր, Ք.ա.VIIդար) փաթույթներ, իլիկներ, բրդյա թելեր կծիկներ, գործվածքներ: Թեյշեբանիի ամրոցը, ինչպես հայտնի է, կրակի ճարակ է դարձել, բրդյա թելերը և գործվածքները թեպետև խանձված, բավական <<լավ>>են պահպանվել: Բուսական թելերը չեն դիմացել, այրվել, մոխիր են դարձել: Բ.Բ.Պիատրովսկու տրամադրած նյութերից հնարավորություն ենք ունեցել ծանոթանալու այդ գործվածքներին: Դրանցից ուշագրավ է կարպետի նմանվող կոպիտ պատառիկը, որի նախշերը ատամնավոր են, եռանկյունաձև, զուգահեռ շարքերով: Հայաստանում ամենագործածական կարպետային իրերից էր խուրջինը (որը գցում էին կենդանիների վրա), ձիու ծածկոցները, անկողնապարկը, գդալամանը, աղամանը և այլն:

Այդ է պատճառներից մեկը, որ կարպետագործությունն ավելի անաղարտ է պահել ազգային ոճը, ավանդական զարդանկարները, թելերի տեսակները: Եվ որքան կարպետագործության վայրը հեռու է եղել քաղաքներից, առևտրական ճանապարհներից, այնքան լավ է պահպանել իր ինքնուրույնությունը:

Դիպլոմային աշխատանքի կառուցվածքը: Դիպլոմաին աշխատանքը բաղկացած է ներածական մասից,մեկ գլխից, որն էլ իր հերթին ունի ենթագլուխներ,

եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքին կից ներկայացված է հավելված:

ԳԼՈՒԽ 1.

ԿԱՐՊԵՏԱՆԱԽՇԵՐԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

<<Մեր կարպետի նախշերը հավատի խորհուրդ են>>[1]

Ամեն մի ժողովուրդ իր կնիքը, իր զարդանկարներն ու իր սիրած գույներն է դնում գեղարվեստական արտադրանքի մեջ: Դարերի ընթքցքում պահպանված ավանդներն արտահայտում են հայ ժողովրդի ճաշակը, նրա գեղարվեստական ու ստեղծագործական ինքնատիպությունը: Զարդանկարային ու գունային լուծումները պահպանվել են դարերի ընթացքում: Միասնական ոճի պահպանման հետ կարելի է հանդիպել նորանոր ստեղծագործությունների: Հիմնական զարդանկարները կրկնվում են ամեն տեղ՝Վասպուրականից Լոռի, սակայն ամեն դարաշրջանում իրեն հատուկ տարբերակներով, զարդանկարային նորանոր կառուցվածքներով: Առանձին գյուղերում նույնիսկ գոյություն ունեին տեղական բնույթի սիրված կարպետանախշեր: Կարպետի ու գորգի զարդանկարներն իրենց բովանդակությամբ առնչվում են հայկական կիրառական արվեստի այլ ճյուղերի հետ: Հին կարպետներ չեն պահպանվել, բայց նրանց բազմաթիվ զարդանկարները կարելի է նկտել քարե հուշարձանների, խաչքարերի վրա: Նրանք հաճախ,փոխանցվելով քարից, կենդանանում են, ճկուն ձև ու փայլ ստանում և նոր տեսքով զարդարում կարպետներն ու գորգերը: Քարի գեղարվեստական մշակման ու կարպետի նմանություններն ավելի ցայտուն են արտահայտվում խաչքարերի ու կարպետի եզրանախշերի, նրանց բազմաթիվ տարատեսակների մեջ: Դժվար է ասել, թե ով է ում վրա ազդել. կարպետագործը քարագործ վարպետի, թե հակառակը: Կարպետի զարդանկարները նմանություններ ունեն նաև փայտի փորագիր նախշերի հետ.Նույն զարդանախշերը կիրառական արվեստի տարբեր բնագավառներում հանդես են գալիս իրենց բնորոշ տարբերակներով, հարմարեցվում տվյալ իրի գործնական նպատակներից թելադրված կառուցվածքներին, կապված են կոնկրետ իրի գեղարվեստական կերպարի գեղագիտական սկզբունքներին, նյութի և տեխնիկական հնարավորություններին: Այդ զարդանախշերն ապրել են դարերով: Նրանց կոխքին ծնվել են նորերը, մերվել նրանց հետ՝հարստացնելով զարդաձևերը;

[1]Կ. Պապիկյան, Հայկական կարպետներ և գորգեր,Երևան, 2009,էջ 9

Ամեն մի ժողովուրդ ունի կարպետի միայն իրեն հատուկ հորինվածքը, իր սիրած կարպետանախշերը: Հայկական կարպետի զարդանախշերը երկրաչափական, կենդանական և բուսական են: Կարպետագործության տեխնիկային ավելի բնորոշ է երկրաչափական զարդանախշը: Ամենապարզ ու ամենատարածված զարդանախշը եռանկյունն է: Այն երբեմն առանձին զարդանախշ է, երբեմն էլ հորինվածքի հիմք: Շեղանկյան նիստերի վրա դասավորված եռանկյունները փոխում են շեղանկյան ձևը, իսկ շեղանկյան վրա գագաթով գործված եռանկյունն ստեղծում է երկրաչափական նոր մարմին: Տարածված զարդանախշերից է շեղանկյունը, ոիր ներսը երբեմն միագույն է լինում: Յոթ փոքր շեղանկյուններից (մեկը՝ներսում, իսկ վեցը՝նրա շուրջը) կարպետագործը կարող է ստանալ տարբեր գեղագիտական պատկերներ առաջացնող զարդանախշ: Շատ հաճախ կարպետի հիմնական կոնպոզիցիան ստեղծվում է վեցանկյուններից, որոնք, մի քանի շերտով դասավորվելով կարպետի դաշտի վրա, մեղրամոմի խոռոչներ են հիշեցնում: Կանթեղը եռանկյան և քառակուսու համադրությունն է, տիկնիկը միջին և փոքր եռանկյունների միաձուլումը, մոմը՝երկարավուն նեղ քառանկյունու վրա դրված փոքր քառակուսի և այլն: Կարպետագործության զարդանախշերը պարզ գծերից մինչև բարդ ելուստավոր գրաֆիկական կերպարներն են ընդգրկում՝ եռանկյուններ, քառակուսիներ, բարդ հորինվածքներ ունեցող վարդակներ: Յուրաքանչյուր զարդանախշ իր ռիթմն ու բազմատեսակ տարբերակներն ունի:

Տարածված զարդանախշեր են աստղը՝ իբրև լույսի, օգտոգոնը՝ կոսմիկական միասնության, ծրարը կարոտի զգացողության, պանդխտության խորհրդանիշ և այլն: Խաչը հայ մշակույթի բազմաբնույթ ստեղծագործություններում լայն տարածում ստացած զարդանախշ է: Իհարկե, նախնական ձևը հավասարաթև խաչի պատկերն է եղել: Այն տիպական էր հեթանոսական մշակույթի զանազան բնագավառներում իբրև զարդանախշ, որը խորհրդանիշն էր աշխարհի նյութականությունը կազմող չորս տարրերի՝ օդի, ջրի, հողի և հրի (արև): Հնագույն խաչանախշը մեզ է հասել և առանձին պատկերով (հավասարաթև խաչ), և շրջանակի մեջ, որը հավանաբար, հենց երկրագնդի պատկերն է հանդիսանում:

Վաղքրիստոնեական շրջանում, ըստ երևույթին, Քրիստոսի խաչելության ավանդության հիման վրա, խաչը մեծ տարածում գտավ և, իբրև սրբազան նշան, դարձավ նոր հավատի գաղափարների խորհրդանիշը: Կեռխաչը (սվաստիկան) խաչի գրաֆիկական արտահայտությունն է՝ թևերի ծայրերն ուղիղ անկյան տակ թեքած (երբեմն էլ աջ կամ ձախ ծռված): Այս զարդանախշը հիմնականում զուգորդվում է կենաց ծառի պատկերման հետ, քանի որ այն ևս խորհրդանշում է կյանքը, արևը, կայծակը, կրակը, հավերժությունը, պտղաբերությունը և ծննդաբերությունը: Հետագայում կեռխաչը գործածվեց որպես ֆաշիստական գերմանիայի դրոշի հորինվածքի կենտրոնական տարր, դարձավ բարբարոսության ու բռնության խորհրդանիշ: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում կենդանական զարդանախշերը: Հատկապես տարածված են քառանկյան, շեղանկյան շուրջը դասավորված կեռերից ստացվող հորինվածքները, որոնք խեցգետնի են նմանեցվում: Կեռերի մի փոքր այլ դասավորությունը զարդանախշը նմանեցվում է խոյի գրաֆիկական պատկերմանը.Կարպետների դաշտի ազատ տարածքներում գործում են ընտանի թռչունների, կենդանիների ու մարդկանց պատկերներ: Հաճախ է հանդիպում լատինական S տառը հիշեցնող օձանման կեռիկը, որն ավելի շատ գորգագործության մեջ է տարածված: Ինչպես հայկական գորգարվեստում, որտեղ առանձին խումբ են կազմում նշանավոր վիշապագորգերը, այնպես էլ կարպետագործության մեջ իր ինքնատիպ արտացոլումն է ստացել վիշապի պատկերումը: Գոյություն ունեն բազմաթիվ վիշապապատկրներ, որոնք շատ ավելի հայտնի են օձակարպետ անվանումով:

Յուրաքանչյուր օձը S գրաֆիկական տեսք ունի՝ ուղիղ եզրագծերով, որոնք ձևավորված են նեղ գծերի և փոքր քառակուսիների հավասարաչափ ելուստներով: Օձերի հիմնական գծանկարի ներսում տեղադրված են նրբագեղ մանր <<օձիկներ>> երբեմն լայն շերտով՝ երկու կամ երեք շարքով: Յուրաքանչյուր օձ երկու կամ երեք ելուստ ունի, պոչանման, իսկ ներքևի մասում նույն կարգի ելուստները ոտքերի տպավորություն են թողնում: Օձի մարմնի ազատ տարածքում գործում էին բազմազան զարդանախշերից կազմված բարդ հորինվածքներ, որոնցում պարտադիր էր խաչը: Օձակարպետների հայրենիքը Զիլեն է: Զիլեում է սկիզբ առել և զարգացել օձակարպետ գործելու կուլտուրան,որը հետագայում տարածվել է Փոքր Ասիայում,

Կովկասում և հատկապես Արցախում(նկ.1): Օձակարպետները, որպես կանոն, ունեցել են կարմիր ֆոն, որի վրա հաջորդաբար տեղադրվել են կապույտ և սպիտակ օձանախշերը:

Կարպետագործության մեջ կենդանական զարդանախշերն ունեն նաև հերալդիկ արտահայտություններ: Դրանցից են արծիվը, թռչունները, շունը, կատուն և այլն: Այդ զարդանախշերի նախատիպերը կարելի է տեսնել ժողովրդական հավատալիքներում կամ կիրառական արվեստի մյուս ճյուղերում: Կենդանական և երկրաչափական զարդանկարներն ամենահինն են, դարերի ընթացքում նրանք մշակվել են, հղկվել, ընդունել կատարյալ ձևեր: Ամեն մի գիծ, գծերի խումբ կազմված են մաթեմատիկական ճշմարտությամբ. յուրաքանչյուր գիծ իր որոշակի տեղն ունի: Զարդանախշերի երրորդ խումբը կազմում են բուսական զարդանախշերը: Անշուշտ, կարպետագործության մեջ բուսական զարդանախշերը չունեն գորգերի այնքան շքեղ բուսական զարդանախշերի կառուցվածքի նրբագեղությունը, անցումների փափկությունն ու ազատությունը: Կարպետի բուսական զարդանախշերի եզրերն անկյունային հատումներ ունեն, որոնք թելադրված են կարպետի գործվածքի առանձնահատկություններով:

Բուսական զարդանախշերից ամենատարածվածը աստղածաղիկն է: Այն կարպետագործության մեջ հանդես է գալիս հինգ կամ ավելի թերթիկներով: Աստղածաղիկները երբեմն զուգորդվում են, երբեմն դառնում են վարդակի կենտրոնական հատվածը կամ դատարկ տարածքները լրացնող մանր զարդանախշեր: Աստղածաղկին նման են խաչվարդերը, որոնք իրար հետևող և խաչ ստեղծող գծերն են: Այս խաչի յուրաքանչյուր թևի տակ տեղադրվում է եռանկյունաձև նեղ երիզ: Կարևոր են բուսական ճյուղերը, որոնք ուղղահայաց առանցք ունեն, երկու կողմից՝ զույգ երկարավուն տերևներ: Նուռ անունն է կրում մի քանի սուրանկյուն եռանկյուններից կազմված այն հորինվածքը, որն ունի սուրանկյան ճառագայթանման ծայրերը հավաքող կենտրոն և նիստավոր եզրեր: Այն համարվում է սիրո, պտղաբերության և անմահության խորհրդանիշ:

Բուսական մոտիվների ամենագլխավոր արտահայտությունը կենաց ծառն է: Կենաց ծառը խորհրդանիշ է այն բանի, ինչ մարդը կարողացել է քամել հողից, հրաշք

<<գերծառը>>, որին ձգտում է հողագործը: Սիրված կարպետանախշերի հետ նաև շուշանը՝ իբրև մաքրության, մեխակը՝ իմաստության խորհրդանիշ և այլն:

Կարպետները գործվել են և՝ շրջագոտիներով, և՝ առանց շրջագոտիների: Կարպետների շրջագոտիները լինում են 1,2 կամ 3 երիզանոց: Մեջտեղի երիզն ավելի լայն է, իսկ կողքի երիզները նեղ են և տարբեր տեսակի մանր զարդանախշեր ունեն: Եթե կարպետը շրջագոտի չունի, ապա դաշտը շրջափակվում է մուգ գույնի եռանկյուններով:

1.1 Կարպետի տեսակները

Կարպետները և կարպետագործ իրերը գործվում են տարբեր տեխնիկայով: Ըստ այդ հատկանիշի՝ նրանք պայմանականորեն բաժանվում են յոթ խմբի. մեզար, ջեջիմ, երկուերեսանի կարպետ, շուլալ կարպետ, ուղիղ օղաճիտ փաթաթովի կարպետ, թեք օղաճիտ փաթաթովի կարպետ և ծոպավոր կարպետ:

Մեզարը ամենապարզ գործվածքն է, ոստայնանկությունից անցում կարպետագործության: Այն գործվում է կտավի պես, գործող թելը մեկընդմեջ անցնում է հենքի թելերի միջով. ստացվում է երկու երեսից հարթ, նույնանման գործվածք, ուր երևում են և՝ գործող, և՝ հենքի թելերը: Այս տեխնիկայով հնարավոր է ստանալ նեղ ու լայն շերտորով հյուսվածքներ: Մեզարը հիմնում են գունավոր թելերով, միմյանց հաջորդող նեղ ու լայն շերտերով՝ վերից վար, որոշակի հաջորդականությամբ: Շերտերի արանքներում տեղադրվում են տարբեր գույների բաժանարար գծեր: Մի շարք մեզարներ հյուսված են երեք գույնի՝ կարմիր, հողագույն և շագանակագույն թելերից ու բաժանարար մուգ գիծ-շերտերից: Այդ երեք գույնի հենքի թելերը հաջորդաբար, 10 սմ լայնության շերտերով կրկնվում են մեզարի ամբողջ լայնությամբ: Գործող կարմիր թելը հենքի կարմրի թելի հետ ձևավորում է կարմրի քառակուսին, իսկ հաջորդների հետ՝ խառը գույների: Հողագույն գործող թելը հողագույնի հետ առաջացնում է հողագույն քառակուսի, մյուսների հետ՝ խառը և այլն: Հետո անցնում են բաժանարար մուգ գույնի մի քանի թելեր, որոնք հենքի նման (նույն

գույնի) թելերի հետ առաջացնում են վանդակ-շրջանակ այդ քառակուսիների համար: Երբեմն կարմիր, կանաչ, կապույտ թելերով հյուսում էին եզրերը, իսկ դաշտը մեծ մասամբ միագույն էր լինում: Օժիտի գունագեղ մեզարները երկու ծայրերից ունենում էին օգտագործված թելերի երկար հյուսքեր, փափուկ փնջեր:

Ջեջիմի ամենաբնորոշ առանձնահատկությունը նրա գունավոր-շերտավոր լինելն է: Դրանք գործում են և՝ լայնությամբ, և՝ երկարությամբ: Սա նույնպես երկերես գործվածք է: Բոլոր գործվածքների մեջ թերևս ջեջիմն է պահպանել գործելու նախնադարյան ձևը: Այն գործում են ջուլհակագործության հնագույն, ամենապարզ եղանակով՝գետնին խփված ցցերի միջև արված հենքի վրա (նեղ ու լայն գունավոր շերտերով): Գործող թելն անցկացնում են հենքով՝ ձախից աջ և աջից ձախ, ապա փայտե թրով նստեցնում: Ստացվում են ներդաշնակ գունավոր շերտեր: Ջեջիմի շերտերը գեղեցիկ են և առանց նախշերի, սակայն ավելի գեղեցիկ ու արտահայտիչ են այն ջեջիմները, որոնց շերտերի վրա գործված են նախշեր: Նախշերը ոճավորված են երկրաչափական և մշակված են նեղ շերտի վրա տեղադրելու համար: Զարդերի շարքում հանդիպում են խաչերի, եղանի, S տառաձևերի, քառակուսիների, հասարակ գործիքների, գազանների, մարդկային պատկերների: Ջեջիմը գործում են նաև խաչաձև, սանրաձև և այլ նախշերով: Ջեջիմների համար սիրված գույներ են եղել տորոնի մուգ կարմիրը, մուգ կապույտը, մուգ կանաչը, բաց դեղինը, սպիտակը, շագանակագույնը: Սևանի ավազանում այսպիսի ասացվածք կար՝<<Մենք յոթ գույնի ջեջիմ կը գործեինք>>[2]: Ջեջիմի բազմաթիվ նմուշներ կան Հայաստանի տարբեր շրջաններում: Նրանցից կարել են փռոցներ՝ տախտի համար, կամ գորգ՝ պատից կախելու: Այդ դեպքում ջեջիմի տակ թաղիք են դրել և ջեջիմի ու թաղիքի եզրով կարել նովար, որը 10-15 սմ լայնության ժապավեն է, գործած բրդյա երկու կամ մի քանի գույնի թելերով, ատամնավոր գործվածքով (կոչվում է նաև զունար),(նկ.2-3): Ջեջիմային գործվածքները վաղուց են հայտնի հայ ժողովրդին: Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրերի մի մասի կազմերին փակցված աստառների մեջ հանդիպում են բազմաթիվ շերտավոր գործվածքներ: Մեզարն ու ջեջիմը պետք է համարել ամենահին, առանց խավի գործվածքներ: Նրանք հեշտ են գործվել՝ ամենահասարակ սարքավորումների ու գործիքների օգնությամբ:

[2]Կ. Պապիկյան,Հայկական կարպետներ և գորգեր,Երևան, 2009, էջ 17

Երկուերեսանի (մատնաքաշ) կարպետն ամենակարևոր գործվածքն է, որից և այդ բնագավառն ստացել է իր անվանումը: Կարպետի հենքն արվում էր խավավոր գորգի նման, հիմնականում ուղղահայաց տորքի վրա: Սկզբնական շրջանում հենքը բրդյա թելով էր արվում, ավելի ուշ՝ բամբակյա: Հենքի թելերի միջով անցնում են հիմնական գործող թելերը, որոնք ամրացնում են կտուտիչով: Կարպետ գործում են երկու եղանակով: Առաջինն այն է, երբ գործվածքը սկսում են մի ծայրից և ավարտում կարպետի վերջում: Երկրորդ եղանակով նախշերը գործում են կարպետի համապատասխան մասերում, որից հետո ազատ տարածությունը տափը, լցնում են միագույն թելերով: Երկու դեպքերում էլ թելերն ամրացնում են եզրերին, իսկ հետ գալիս ամրացնում են տվյալ կետի հենքի թելի վրա: Դրա շնորհիվ առաջանում են փոքրիկ անցքեր (փոխ ,թոռակ, չաթ), որոնք նույնպես ներգրավվում են կարպետի ընդհանուր հարդարանքի մեջ: Երկուերեսանի կարպետի նախշերը ավելի խոշոր են, քան այլ գործվածքներում: Մեծ մեդալիոնները կրում են հայկական տոնական հացի, թխվածքի անունը՝<<գաթա>>, <<բաղարջ>>, <<կրկենի>>: Այս անունները կապ ունեն այն փայտյա, կամ քարից փորագրված գեղեցկանախշ դրոշմների հետ, որոնցով սեղմում, զարդարում են խմորի երեսը՝ նախքան թխելը: Դրանք կրում են տարբեր անուններ՝<<գաթանախշ>>, <<բաղարջանախշ>>, <<կոխիչ>>, <<խատուճ-կոխիչ>>և այլն: Կրկենին ավելի մեծ է, քան գաթան: Նրա վրա էլ գդալով, ակիշով կամ ձեռքով նախշեր են դրոշմվել, Գաթանախշերի մեջ պահպանվել են ամենահին զարդանկարները՝ խաչը, արևի նշանը, աստղածաղիկը, որոնք գործվածքներում ավելի հարստացել, գունագեղ են դարձել: Կարպետային բոլոր գործվածքների մեջ զարդանկարներով ամենահարուստը՝ երկերեսանի կարպետն է: Կարպետի մակերեսի խոշոր մեդալիոնները թվարկելիս ասում են՝<<այս կարպետը երկու գաթանոց է, կամ երկու կրկենի է>>: Գաթաների, մեդալիոնների թիվը կարևոր է կարպետագործուհու համար: Նա է կազմում կարպետի ամբողջ մակերեսի զարդանկարային կառուցվածքը, տեղադրումը, ձևավորումը, շրջանակ-հաշյայի տեսակը, ձևը, լայնությունը և այլն: Կարպետի մեջ պահպանվել են ամենահին զարդաձևերը, որոնց զուգահեռ ստեղծվել են նորանոր նախշեր ու մերվել հների հետ: Ժամանակի ընթացքում մոռացվել են նրանց բովանդակությունը, իմաստը, նշանակությունը, անունները: Այժմ շատ մեծ դժվարություններով է հաջողվում ծեր

կարպետագործուհիներից իմանալ որևէ նախշի անուն.ըստ որում, նույն զարդանկարն էլ տարբեր վայրերում տարբեր անուն է կրում: Ռոմբաձև <<գաթան>>-կենտրոնում՝ խաչ, գծերով բաժանվում է եռանկյունիների: Այս հիմնական զարդանկարը եզերված է տարբեր տեսակի, քանակի ու տարբեր չափերի կեռերով, որոնց զույգը՝ խոյակները կոչվում են <<խոչպոզ>>, <<խոյեղջյուր>>: Երբեմն ռոմբի, գաթայի շուրջը լինում են բրգաձևեր, սանդուղքներ, թռչունի գլուխ՝ կտուցով, գդալանման, ակիշանման մոտիվներով: Կարպետը կոչվում է նաև <<ատամնավոր>>, որովհետև նախշերն ունեն ատամնավոր եզրաշերտ: Հայկական կարպետի աչքի ընկնող զարդանկարը կազմված է կեռերից: Հանդիպում են նաև <<գաթաներ>>, որոնց ոչ թե մի եզրն է կեռավոր, այլ երկու կամ երեք, չորս, ամեն մի շարքը՝տարբեր գույնի. շարքը շարքի մեջ մտած կեռերի հյուսքը՝ կուռ կապված բարդ զարդանկար է: Կարպետի զարդանկարների մեջ աչքի է ընկնում խաչը՝ կապված հեթանոսական պատկերացումների, հասկացություն, առաջին հերթին արևի, բնության ուժերի գաղափարների հետ, որը հետագայում դառնում է քրիստոնեության խորհրդանշան: Խաչի հետ տարածված է աստղածաղիկը՝ հինգ, ութ ծայրերով: Հատկապես ռոմբաձև ութ թերթիկով աստղածաղիկը մեծ տեղ ունի հայկական կիրառական արվեստի բոլոր բնագավառներում, առավել ևս կարպետագործության, գորգագործության մեջ: Աստղածաղկի պսակաթերթիկները ուղիղ, կամ սանդուղքաձև եզրեր ունեն. նրանք լինում են մեծ ու փոքր չափերի և տեղադրվում են կարպետի մակերեսին ու շրջանակներում: Երգնկայից պահպանված մի կարպետի ողջ մակերեսը զբաղեցնում են խոշոր չափերի աստղածաղիկներ: Վեցանկյունները կարպետի մակերեսին դասավորվում են մեղրամոմի բջիջների նման: Վեցանկյան մեջ լինում են ռոմբաձևեր (կեռերով), կենաց ծառեր, բզեզներ և այլն: Կան կարպետներ, ուր վեցանկյունին ամբողջապես չի գրավում մեկ երեսը, այլ անցնում է շարքերով, ըստ որում, ամեն մի վեցանկյունի ունի կոթ (ծառերի շարք): Այրվող մոմերի պես փայլում են շարքերը՝ կարմիր ու կապույտ դաշտի վրա: Թռչնական, կենդանական ու մարդկային պատկերները խիստ ոճավորման են ենթարկվում և արտահայտվում են լակոնիկ գծերով: Կան գործիքների, զենքերի կենցաղային իրերի նկարներ, գութան, չարխ, ակիշ, անիվ, պուլիկ, թուր, մոմ, մկրատ, սանր, կանթեղ, սանդուղք և այլն: Բազմաթիվ են բուսական բնույթի զարդանկարները՝ ցորեն, ծաղիկ, մարջան, հավաքական՝ վարդ,

նարգիզ, խնձոր, նուռ և այլն: Մեզ հաջողվել է ժողովել մի շարք զարդանկարների անուններ: Շատ կարպետագործուհիներ այդ հարցին պատասխանում են <<ոչ անուն, ոչ բան, ինչ գլուխս եկել է, գործել եմ>>[3]: Այնուամենայնիվ նրանք գործել են ըստ ավանդության: Կարպետի մակերեսից, կենտրոնի նախշից բացի, հետաքրքիր են նաև շրջանակի, հաշյայի նախշերը: Կարպետի միջին մասի ու շրջանակի զարդանկարները միմյանց հետ կարող են կապ չունենալ, նրանք տարբերվում են նաև գույնով: Կարպետագործուհին երբեմն կենտրոնական նախշը մի կարպետից է ընդօրինակում, իսկ շրջանակինը՝ մի այլ: Չնայած դրան, պահպանվում է զարդանկարային ոճային միասնությունն ու ներդաշնակությունը: Խոշոր զարդանկարները՝ <<գաթաները>>, <<կրկենիները>> տեղադրվում են կարպետի կենտրոնական մասում, իսկ շրջանակի մեջ՝ որևէ փոքրիկ նախշ: Բացի անջատ-անջատ դրված, կողք-կողքի շարված միևնույն նախշից, կարպետի շրջանակով անցնում են անընդհատ նեղ շերտի զիգզագաձև զարդաձևեր, մի դեպքում՝<<եզան հետք>>, մի այլ դեպքում <<կենաց ծառեր>>: Կարպետի ամենահին և տարածված զարդաձևերից պետք է համարել ոճավորված շուշանը, որը երկու զուգահեռ շարքով և երկու տարբեր գույնով, <<ծաղիկ>> գլուխները դեպի ներս միահյուսված, շրջանակում է կարպետը՝ չորս կողմից: Շուշանաձևը հանդիպում է կարպետագործության, գորգագործության, ասեղնագործության, արծաթագործության մեջ և քարի քանդակներում: Կան կարպետներ, որոնց զարդանկարային կառուցվածքը կազմված է միմիայն աստղածաղկից: Ամեն մի կարպետագործ ցանկացած ձևով է դասավորում սիրված մոտիվը: Կարինը (Էրզրում) գորգի, կարպետի խոշոր կենտրոն է եղել: Անցյալից շատ աննշան հետքեր են մնացել: Քաղաքական, կրոնական, ռազմական իրադարձությունները պարբերաբար ավերել են երկրիը: Զարդերի հետ միասին անհետացել, կորել, մաշվել են նաև կարպետներն ու գորգերը: Կարպետի մի սքանչելի նմուշ է պահպանվել (Վիրաբյանի ընտանիքում), որը Անդրկովկաս է բերվել Կարինից. 1828թ. գաղթի ժամանակ: Կարպետի մակերեսը զարդարում են մի քանի խոշոր մեդալիոններ՝ <<գաթաներ>>: Մեդալիոնի կենտրոնում ռոմբաձևի մեջ հավասարաթև խաչ է, հետո մի շրջանակ՝ վեց խաչանիշ ռոմբերով, հաջորդը՝ կեռերի կրկնակի շրջանակն է: Ռոմբաձևերի երկու հակադրի գագաթների՝ <<խոյ-

[3] Ս.Դավթյան,Հայկական կարպետ,Երևան,1975,էջ 34

եղջյուրների>>արանքում խաչ է: Շրջանակող վերջին ցանցաձևն այլ կարպետներում քիչ է հանդիպում: Մեդալիոնների և շրջանակի միջև ընկած տարածության վրա տեղադրված են կենդանիների պատկերներ, խաչեր, <<Հարսն՝ իրեն խեղդող>>և այլ նախշեր: Այս կարպետը ոչ թե մի շրջանակ ունի, այլ գորգի նման երեք շրջանակ, որտեղ հիմնական նախշերը՝ կեռերով են: Շրջանակներով հարուստ է նաև մի այլ կարպետ: Ս.Օզնեցյանի Ալեքսանդրապոլում 1906թ. գործած նուրբ կարպետի մակերեսին գեղեցիկ զուգորդված են բուսական ու թռչնական զարդապատկերները. թռչնազարդերը մի շերտում աջից ձախ, իսկ հաջորդում՝ ձախից աջ են գնում: Կարպետի եզերքով անցնում են մի քանի շրջանակներ. կրկնվող ծաղկաձևերի սրտում խաչ է, ամենալայն շերտի վրա՝ ոճավորված ու կրկնվող ծաղիկ՝ երկու տերևով: Հավասարաթև խաչը զարդարում է այդ ծաղիկը, ինչպես նաև կարպետի մակերեսի բուսական նախշերը: Կարմիր տափի վրա հաճելի մեղմությամբ են հնչում մանր, խիտ զարդաձևերը: Թռչունների շարքերը կենդանություն են մտցնում այնտեղ (նկ.4-5):

Շուլալ կարպետի նախշերը գորգի նման արվում են փափուկ թելերով: Անվանումը գալիս է գործելու տեխնիկայից: Գործող նախշը ձևավորվում է հորիզոնական գծերով, հենքի միջով անցնում է շուլալ կարի պես, ծածկում հենքի մի քանի թելը, ապա անցնում կարպետի տակի կողմը, որոշ տարածությունից հետո նորից դուրս է գալիս կարպետի երեսը, դարձյալ վերցնում են մի քանի թել և անցնում տակի կողմը: Կարպետի տակի կողմից երևում է նախշի նեգատիվ ձևը: Նախշ ձևավորելիս գործող թելի ծայրերը կարպետի հետևի կողմում թողնում են կախված: Ավարտելուց հետո տակից կապում են կարի հանգույցով: Շուլալ կարպետի և՝ նախշերը և՝ տափը (դաշտը) միասին են գործվում, շարք շարքի հետևից: Գործողը պետք է ունենա հաշվելու, նախշը դուրս բերելու հմտություն, նաև փորձ, աչքաչափ, ճաշակ: Անդրկովկասյան և հայկական շուլալ կարպետներում կա տարածված մի զարդանկար, որը կոչվում է <<հարսը իրեն խեղդեց>>[4]: Ըստ ավանդության՝ հարսը չի կարողացել խուրջինի նախշը ճիշտ ստանալ.գործել է, քանդել, նորից փորձել, վերջիվերջո խճճվել է, ոչինչ չի ստացվել և հուսահատված իրեն կախել է: Շուլալ կարպետն ավելի դժվար է գործել, քան երկուերեսանին, որովհետև ավելի հաստ է,

[4] Ս.Դավթյան,Հայկական կարպետ,Երևան, 1975,էջ 42

դիմացկուն, ուստի այդ տեխնիկայով գործվում են շատ գործածելի իրերը՝ խուրջինը, անկողնապարկը, աղաքսակը: Այստեղ զարդանկարներն այնքան բազմազան չեն, ինչպես երկերեսանի կարպետում: Ահա մի գեղեցիկ կարպետ, գործված Շուշի քաղաքի մոտ գտնվող հայկական մի գյուղում: Կարպետի մակերեսը ծածկված է գունավոր կեռավոր ռոմբազևերով, որոնք այնքան մոտ են տեղադրված, որ մի ռոմբի կեռերը մտել են մյուս ռոմբի կեռերի արանքը: Նախշերը մանր են խնամքով կատարված: Շրջանակի ռոմբաձևերի կողքերից գծեր-շողեր են անցնում: Ռոմբերը շարված են կողք-կողքի: Մուգ կարմիրը, շագանակագույնը, մուգ կանաչը, թույլ սպիտակը ստեղծում են գույների հանգիստ ներդաշնակություն: Գործվածքը նման է ասեղն առաջ շուլալ կարին: Գեղեցիկ է Ա.Ֆրանգուլյանի (Դիլիջան) անկողնապարկը, որը մեկ դարից ավելի կյանք ունի և սերնդից սերունդ է անցել օժիտի միջոցով (նկ.6): Բարդ են նրա զարդանկարները, որոնք անցնում են շերտերով՝ մեջտեղինը՝ լայն, վերևինը և ներքևենիը՝ նեղ, դրանց արանքներում՝ վերևից ու ներքևից միանման նեղ շերտեր, միմյանց մեջ մտած կեռ կրկնակի շարքերով: Շերտերի արանքներով անցնում են բաժանարար գծեր: Զարդաձևերը ատամնավոր եզրերով կամ կեռերով ռոմբեր են, արանքներում՝ եռանկյունաձևեր: Նման գործվածքները շատ հին են, նոր ժամանակներում այդպիսի տեխնիկայով գործվել են լոկ մանր չափերի խուրջիններ, անկողնապարկեր: Շուլալ տեխնիկայով գործած երեխայի խուրջինը (Զանգեզուր,Օ.Վարդանյան)ունի երկու գրպան -<<աչք>>: Խուրջինի արտաքին երեսները և գրպանների միջև եղած տարածությունը նախշուն է, իսկ աստառի ետևի մասը՝ միագույն, որի վրա տեղ-տեղ S ձևն է: Խուրջինի երեսների համար մշակված են հատուկ զարդանկարներ: Երեսի կենտրոնում իրար կողքի, վարից վեր դրված են երկու ռոմբաձևեր, որոնց ամեն մի կողի վրա կան զույգ <<խոյեղջյուրներ>>: Դրանից հետո մի ատամնավոր ռոմբաձև զարդ շրջանակում է կենտրոնի նախշերը, ապա գալիս են զույգ գունավոր գծեր: Երկու ռոմբաձևեր առնված են քառանկյուն շրջանակների մեջ: Բաց մնացած տարածության վրա երկու կողմից դրված է կենտրոնի ռոմբաձևի կեսը, անկյուններում՝ քառորդը: Շրջանակի լայն շերտի վրա դարձյալ ռոմբաձևեր են: Գրպանների արանքի կտորն էլ ձևավորված է շրջանակով և <<ճանճ>>կոչվող նախշով (երկու զույգ գծեր միմյանց հատող): Խուրջինի բերանի հետ գործած են՝ <<գարի>>շերտը, քուղը և օղակները, որոնց միջով անցնում է առանձին

հյուսված, փնջած քուղ-պարանը: Խուրջինի տափը կարմրի է, նախշերը դեղին, կանաչ, մուգ կապույտ, բաց կարմիր (նկ.6): Հայաստանի պատմ.պետ.թանգարանում կան շուլալ տեխնիկայով գործած խուրջիններ և կարպետներ: Ժողովրդական ստեղծագործության թանգարանում կան մի քանի գործվածքներ՝ կատարված շուլալ տեխնիկայով: Ինչպես երևում է, խուրջինի մակերեսը զարդարում են բարդ ռոմբաձևերը, իսկ շրջանակի կրկնվող նախշերը կազմված են եռանկյունիներից: Հետաքրքրություն են առաջացնում <<աչքերի>> արանքի կտորի, ուր շարքով անցնում են աստղածաղիկներ: Հաջորդ շարքի կենդանական պատկերները վեր են ածվել օրնամենտալ զարդանկարների: Շամշադինի բերդ գյուղացի Ս.Պողոսյանի օժիտի աղաքսակը չնայած գործվել է XIX դ.վերջերին, սակայն այժմ էլ բոլորովին նոր է: Ղափանի աղաքսակի զարդանկարները երեսի կողմից ռոմբաձև են, իսկ հետևի կողմից՝ շերտավոր: Ալավերդու աղաքսակի զանդանկարները դասավորվոծ են շերտերով, ինչպես գործվում են անկողնակալները: Այժմ աղաքսակներ չեն գործում, բայց պահպանվածներն օգտագործվում են լեռնային Հայաստանի անասնապահական շրջաններում: Աղաքսակը գործել են յուղած թելով, թրջվելուց պաշտպանվելու համար: 60x40 սմ մեծության այդ գրպանները հայկական ազգագրականա նշութերի մեջ ամենահետաքրքիրներն են, կիրառական արվեստի տեսանկյունից էլ ուշագրավ են իրենց հատուկ մշակված զարդանկարներով: Գդալամանը անհետացած մի գործվածք է, որն այժմ ունի լոկ ազգագրական նշանակություն: Գդալամանը մի ցանց է, որի գլխի վերևի մասը գործված է շուլալ կարի տեխնիկայով, իսկ ներքևը՝ հենքի թելերից հյուսված ցանց է, հատման կետերը ասեղնագործված են և վերջանում են փնջերով: Ջվալների բերանների եզրով անցնող շերտը նույնպես գործված է շուլալով: Բացի մեկական գծերով ձևավորված նախշերից, կան կրկնակի շուլալով արված գործվածքներ, ուր նախշը կազմված է մանրիկ քառակուսիներից: Դրանք հազվագյուտ իրեր են, և այժմ թանգարանային արժեք են ներկայացնում: Երևանի պետական թանգարանում է գտնվում Խ.Դավթյանի մեծ կարպետը, գործված կրկնակի շուլալով: Կրկնակի շուլալ տեխնիկայով մեծ կարպետներ քիչ կան, բայց խուրջիններ հանդիպում են: Շուլալ և կրկնակի շուլալ գործվածքներում նախշերը, շնորհիվ փափուկ թելի, բարձրանում են մակերեսից,

ուռուցիկ տեսք ընդունում: Զարդանկարի և գույների ներդաշնակությունը հմայիչ գեղեցկություն են տալիս գործվածքին:

ՈՒղիղ օղաճիտ փաթաթովի կարպետում գործող գունավոր թելը փաթաթվում է հենքի մեկ կամ երկու թելի շուրջը, օղաձև <<ճիտ է անու>>, փաթաթվում, անցնում առաջ, ապա պտտվում հենքի հաջորդ մեկ կամ երկու թելերի շուրջը և այսպես մինչև շարքի վերջը: Շարքն ավարտելուց հետո անցնում է միջնաթելը և ամուր կտուտվում-ամրացվում: Հենքի թելը և միջնաթելը չեն երևում, թաքնվում են գործվածքի մեջ: Այս տեխնիկայով գործվածքի դեպքում գործող թելն ուղիղ գծով է տեղադրվում, իսկ երբ հաջորդ շարքում վրայից նույն գույնի թել է անցնում, ստացվում են մանր քառակուսիներ: Դիտողին թվում է, թե ուղիղ համրովի հարթակար ասեղնագործություն է: Գործվածքի հետևում գործող թելը թեք-թեք է նստում: Օղաճիտ փաթաթովի կարպետները միերեսանի են, հաստ, խիտ են գործված և բարձր են գնահատվում: ՈՒղիղ օղաճիտ գործվածքը բարդության պատճառով շատ քիչ է ընդօրինակվել: <<Վերջին գործերը վերաբերում են XX դարի առաջին քառորդին.այժմ ոչ ոք չի կարող գործել>> [5] Կարպետի զարդանկարներում հանդիպում են քառակուսիներ, եռանկյունիներ, ռոմբաձևեր, խաչեր և կենաց ծառեր: Խուրջինների մակերեսի համար կազմված զարդանկարները եզերվում են շրջանակով, ուր կրկնվում է որևէ մանր նախշ: Ինչպես բոլոր կարպետներում, այստեղ էլ ներքին կապ ու ներդաշնակություն կա գործելու տեխնիկայի և զարդանկարների միջև: Շնորհիվ այն հանգամանքի, որ ամեն մի շարքից հետո միջնաթել է անցնում, կտուտվում, կարպետի գործվածքը դառնում է ամուր, թանձր: Երևանի պատմության թանգարանում կա լոռու գործած մի խուրջին: Այս խուրջինի ռոմբաձևի կենտրոնում խաչ է: Այլ վայրերում նման գործվածքի չենք հանդիպել: Գեղեցիկ են առանձին զարդանկարները:

Թեք օղաճիտ-փաթաթովի կարպետը ուղիղ օղաճիտի պես բարդ գործվածք է: Դարձյալ գործող գունավոր թելը պատ է տալիս, <<օղաճիտ անում>>հենքի ամեն մի կամ երկու թելին: Կարպետի գործվածքում բարակ, ոլորած թելը, ամուր միջնաթելը, ինչպես գորգերի մեջ, ամրացնում է շարքերը և ինքը չի երևում: Թեք օղաճիտը նախորդից

[5]Ս.Դավթյան,Հայկական կարպետ,Երևան, 1975,էջ 45

տարբերվում է իր օղակների տարբեր դասավորությամբ: Ուղիղ օղաճիտ կարպետում թելերը, օղակների շարքը երեսի կողմից ուղիղ են դասավորվում, առաջ բերելով մանրիկ քառակուսի (երկու շարքը միասին), իսկ թեք-օղաճիտ կարպետում գործող թելերը դասավորվում են թեք-թեք: Եթե համեմատենք ասեղնագործության հետ, կտեսնենք, որ նման է շյուղակարի, ցողունակարի և ավելի շատ համրովի թեք հարթակարի: ինչպես շուլալ կարպետի, այնպես էլ ուղիղ օղաճիտ-փաթաթովի կարպետի գործող թելը տակից թռչում-անցնում է, բաց թողնելով հենքի թելերը, ամեն մի նախշ իր թելերով է ձևավորվում և թելն էլ տեղնուտեղը կտրվում է. Թելի ծայրն անցնում է կարպետի տակի կողմը: Դաշտ-տափն ու զարդանկարները այստեղ միասին են գործվում, շարք-շարքի ետևից: Ուղիղ օղաճիտում կարպետի երեսին քառակուսիներ են արվում, որոնք տակի կողմից թեք-թեք են ընկնում, իսկ թեք-օղաճիտում՝ երեսի կողմից օղակները թեք-թեք են, իսկ տակի կողմից՝ ուղիղ: Թելերի ծայրերը նույնպես մնում են կարպետի տակի կողմից կախված, գործվածքը բանեցվում է միայն մի կողմով, մի երեսանի է: Երբ գործող թելն անցնում է ձախից աջ, օղակները մի թեքություն են ունենում, իսկ երբ աջից ձախ՝ հակառակ: Նրանք հիշեցնում են բրոնզյա գոտիների, ապարանջանների, կավե ամանների վրայի թեք գծային փորագրությունները: Շատ կարպետագործներ հեշտության համար միշտ ձախից աջ են գնում, այն ժամանակ օղակների թեքությունը միշտ մի ուղղություն է ունենում: Վերջին երկու տեսակ կարպետների տափի և զարդանկարների թելերը նույն հաստության են:

Ուղիղ և թեք օղաճիտ-փաթաթովի կարպետները ամենաբարդ գործվածքներն են կարպետագործության մեջ: Բարձր որակի գործվածքը, գեղեցիկ ոճավորված զարդանկարները բարձրացրել են կարպետի արժեքը և հաճախ այն <<գորգ>> անունն է կրել:

Ծոպավոր (ծոպերես) կարպետը գործելիս մակերեսին տեղ-տեղ շերտերով գորգի հանգույցներ, թլիփներ կամ օղակներ են կապում և ծայրերը կտրած թողնում երեսի վրա: Գոյանում են գորգի նման խավով նախշեր: Մի քանի նմուշներ կան որոնք բերված են Վասպուրականից և Հին Բայազետից: Դրանցից մեկը խուրջին է: Բաց և մուգ շագանակագույն շերտերը դասավորված են ուղղահայաց, ունեն սև ու կարմիր

բաժանարար գծեր: Հանգուցավոր հորիզոնական շերտերն արված են վառ կարմիր, կապուտ, դեղին, կանաչ բրդյա թելերով: Շերտերի արանքում մեկ ու մեջ անցնում է <<գարի>> կոչվող շղթայագործ նեղ շերտը: Խուրջինի եզրերին կաշի է կարած, իսկ <<աչքի>> բերանին՝ կաշվի օղակներ են, որոնք միմյանց մեջ մտնելով, ամուր փակում են խուրջինները: Վերևից դեպի ցած ընկած են երկար, խիտ ծոպեր և ծածկում են խուրջինը: Ծոպերը վերջանում են գեղեցիկ փնջերով. ձիու վազքի ժամանակ երևի ծփացել են, միևնույն ժամանակ պաշտպանելով խուրջինը ձյունից, անձրևից: Երկրորդ նմուշը մի կարպետ է Բայազետից: Կապույտ մակերեսի վրա հանգուցավոր գունավոր փնջեր են, որոնք գեղեցիկ տեսք են տալիս կարպետին: Նման կարպետները Հայաստանում քիչ են տարածված: Հանդիպում են Լենինականի շրջակայքում: Այս գործվածքները գրավել են մեր ուշադրությունը ոչ միայն զարդանկարներով, այլև գործվածքի ձևով, տեխնիկայով: Մեզ թվում է, որ ինչպես մեզարը, գուցե և ջեջիմը անցնում են ոստայնանկությունից դեպի կարպետագործություն, այնպես էլ ծոպավոր կարպետը անցնում է կարպետից դեպի գորգագործություն: Կարպետների մակերեսին հանդիպում են ոչ միայն հանգույցների ծայրեր, այլև չկտրված օղակներ:

1.2 Կարպետների կիրառական նշանակությունը

Մարդկությունը դեռևս շատ հին ժամանակներից է խոտերից, եղեգնից, ճյուղերից, տերևներից, փսիաթ (խսիր), հանդերձանք հյուսել-պատրաստել: Այդ ճանապարհով էլ ծնվել ու զարգացել է ջուլհակությունը-ոստայնանկությունը: Մեր օրերում էլ շատ երկրներում դեռևս մատներով հյուսում են գունագեղ փսիաթներ, կողովներ: Ցորենի ցողուններից, ուռենու ճյուղերից հյուսում են զամբյուղ, սալա, զանազան կողովներ, որոնք իրենց հյուսման տեխնիկայով մոտ են կարպետագործության անհամեմատ բարձր արվեստին: Հնագիտական պեղածո նյութերը վկայում են, որ Հայաստանում կարպետագործությամբ զբաղվել են դեռևս Ք.ա.III հազարամյակում: Քանի որ գործվածքները կենցաղում հազարամյակներ դիմանալ չէին կարող, իրական պատկերը ծագման ժամանակի վերաբերյալ ամբողջական չէ: Տեղեկությունները սուղ են ու թերի: Շատ հավանական է, որ այդ կարքի գործվածքներն ավելի վաղ են պատրաստվել, որովհետև եթե Ք.ա.III հազարամյակում հայերը ներկատու բույսեր էին մշակում ու ներկ պատրաստում (ըստ հնագետ Գ.Արեշյանի), պետք է ենթադրել, որ ոստայնանկությունն էլ գոյություն ուներ: Ինչպես շատ ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի կենցաղում կարպետները և կարպետային գործվածքները մեծ տեղ են գրավել: Դրանք ծառայել են տարբեր նպատակների և ունեցել են տարբեր անուններ: Գյուղերում աղջիկները դեռ վաղ հասակից նստել են տորքի առջև,յուրաքանչյուրն իր օժիտի համար հյուսել է կարպետահյուս խուրջիններ ու աղաքսակներ,անկողնապարկ ու տաշտի մեզար, գդալաման ու վարագույր: Օժիտը կազմող հյուսվածքները խոսում էին հարսի շնորհքի և ունակությունների մասին [6]:

Կարպետը զարդարել է բնակարաններն ու եկեղեցիները, ունեցել է պաշտպանիչ դեր, ցրտից պաշտպանել է մարդկանց և գործածվել որպես հանդերձանք:
Կարպետները ծառայել են տարբեր նպատակների և ունեցել են տարբեր անուններ: Այսպես, օրինակ, մեզարները գործ էին ածվում հաց թխելու ժամանակ և կոչվում էին աղունի, հացի, խմորի, գնդի տաշտի մեզար: Նախնական նեղ շերտավոր գործվածք

[6]Կ. Պապիկյան,Հայկական կարպետներ և գորգեր,Երևան, 2009, էջ 5

ջեջիմը ծառայում էր որպես փռոց: Նրանից կարում էին սփռոց, ծածկոց, բարձր մութաքա, խուրջին, ներքնակի երես: Երկուերեսանի կարպետը կենցաղի ամենատարածված գործվածքն էր և կրում էր տարբեր անուններ, այսպես, գետնին զցելու անկողնի տակ, պատի ճոճի և այլն: Կարպետի զանազան տեսակներ են կիրառվել: Դրանցից են, օրինակ, մեզարները (նուրբ, բարակ, ոչ խիտ գործվածք), որոնք կիրառվել են լավաշի խմորի գնդերը ծածկելու համար և գործվել են ինչպես կտավը:

Սկզբում այն գործվել է խսիրի ձևով: Սերիկ Դավթյանի կարծիքով, մեզարը ոստայնանկությունից անցումն է կարպետագործությանը: Մեզարները լինում են միմյանց հաջորդող նեղ ու լայն շերտերով `դասավորված վերից վար: Մեզարները նաև յուրահատուկ են նրանով, որ դրանց հիմնաթելերը լինում են գունավոր: Հիմնականում տարածված են եղել Հայաստանի բոլոր շրջաններում, ինչպես օրինակ Դիլիջանում, Արցախում:

Ջեջիմը (ճիմ-ճիմ) (բազմագույն, նախշավոր, խիտ գործվածք է) ծառայում էր որպես փռոց, դրանով կարում էին նաև ներքնակի երես: Ջեջիմները մեզարների նման ունեն գործելու գրեթե նույն տեխնիկան: Նախշերը ստեղծում էին առանձին թելով՝ փայտիկների միջոցով: Փայտիկներն օգնում էին գործվող նախշի հաշիվը պահելու համար: Ջեջիմի նախշերը հիմնականում լինում են ուռուցիկ: Նախշավոր ջեջիմները գործվել են օժիտի համար:

Երկկողմանի («մատնաքաշ») կարպետները ամենաշատն էին կիրառում կեցաղում: Այս տեսակի կարպետների հիմնաթելը միագույն է, գործվածքը՝ խիտ և բազմանախշ, երբեմն ` շերտավոր կամ կրկնվող նախշերով: Կարպետի երկու կողմում նույն զարդանկարն է, նախշերը խոշոր են, գույնզգույն և հստակ: Ի տարբերություն մեզարների և ջեջիմների սրանք հիմնականում ունեն եզրագոտիներ և կենտրոնական հատված: Վերջիններս հորինվածքով մոտ են գորգերին և իրենց մեջ կրում են զարդաձևերի ամենահին տեսակները և գաղափարները: Դրանց մեջ առավել աչքի են ընկնում խոշոր մեդալիոնները, խաչաձև զարդանախշերը, թռչնային, կենդանական նաև բուսական զանազան զարդաձևեր: Երկկողմանի կարպետներում կիրառում էին բամբակյա և մետաքսյա թելեր: Դրանց կիրառության սահմանները

բազմազան են. գցում էին հատակին, փռում անկողնու տակ կամ կախում էին պատից: Կարպետները կիրառվել են՝ որպես ննջեցյալի տապան, եղել են նաև աղոթքի կարպետներ:

Գեղեցիկ են ինչպես Արցախի, այնպես էլ Սյունիքի, Լոռվա կարպետները: Կարպետների յուրահատուկ տեսակով առանձնացել են Վան-Վասպուրականը, Խոյ-Սալմասը, Կիլիկիան, Բարձր Հայքը, Սեբաստիան և այլն:

Արցախում համընդհանուր տարածում են ունեցել մեծադիր կարպետները, որոնք գործվել են օժիտի մեջ մտնող տոհմագորգերի, բազմականների, անկողնապարկերի հետ: Հատկանշականն այն է, որ դրանք ունեն դասական վիշապագորգերին բնորոշ չափեր երկու մետր լայնություն և մինչև ութ մետրի հասնող երկարություն: Արցախի և Սյունիքի գորգագործական կենտրոններին բնորոշ է ն Մեղվակարպետներները և Կրկենի կոչվող կարպետները, որոնց զարդանախշով ստեղծվել են նաև գորգեր: Արևագորգերին բնորոշ զարդանախշով կարպետներ էլ են ստեղծվել: Վերը նշված տարածաշրջանին բնորոշ են թելթող տեսակի կարպետները:

Կարպետագործական հետաքրքիր նմուշներ են ստեղծվել այժմյան Լոռվա և Տավուշի տարածաշրջաններում:Այս շրջաններին բնորոշ են ոչ միայն երկրաչափական հորիվածքները, այլ նաև բուսական և կենդանական, թռչնային պատկերները:

Մեծ տարածում են ունեցել եղնիկներով կամ սիրամարգներով ինչպես կարպետներն, այնպես էլ՝ գորգերը: Այս տարածաշրջաններում տարածված են եղել նաև նշազարդերով հարդարված կարպետները: Երկաչափական հարդարում ունեցող հորինվածքներից ամենատարածվածը կենաց ծառի պատկերն է, ոչ հաճախ բայց հանդիպում են նաև կանացի ֆիգուրներ:

Իրենց հորինվածքով և գունային գամմայով խիստ տարբերվում են Արևմտյան Հայաստանի կարպետները: Դրանք ունեն երկրաչափական մանր հարդարում, համեմատաբար ավելի մուգ գունավորում: Մանր զարդանախշային ձևավորում ունեն նաև Խոյ-Սալմաստի, Ջուղայի կարպետները:

Կարպետից պատրաստում էին վարագույր, վարագույրի գլուխ: Կարպետագործ խուրջինը երկու միահավասար տոպրակ է՝ միացած կտորով,կոչվում է նաև հայբա, հաբգյա, հաբիգա: Խուրջինը լինում է տարբեր չափերի ամենափոքրը՝ մանկական, մեծը՝ տղամարդու. դրանից մեծ է ձիու խուրջինը: Ամենախոշար խուրջինը իշախուրջինն է, որի մի մասում սարը գնալիս, տեղավորում էին խնոցին, մյուսում պղինձև կամ այլ իրեր: Մեծ էր նաև եզնախուրջինը: Հարսի օժիտի անհրաժեշտ մասն է կազմել նաև խուրջինը: Հարսի օժիտում եղել է անպայման 1-2 անկողնապարկ, որի մեջ դառսած տեղափոխել են անկողին, հագուստ, կարպետ, գորգ և այլն(նկ7,8):

Կարպետի ծածկոց-չուլը գցել են անասունների վրա՝ ցրտից պաշտպանելու համար: Կարպետները ցրտից նաև պաշտպանել են մարդկանց: Եկեղեցու ներսի զարդարանքի մեջ գորգն ու կարպետը մեծ տեղ են գրավել: XVIII դարում,երբ Եկատերինա II-ի կարգադրությամբ Ղրիմից հայերին փոխադրում էին Ռուսաստան, ճանապարհին ցուրտը վրա է հասնում: Գաղթականներից շատերը տաք հագուստ չեն ունեցել: Արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանը կարգադրում է եկեղեցու կարպետներն ու գորգերը բաժանել ժողովրդին՝ ցրտից պաշտպանվելու համար: Այդ կարպետի ու գորգերի մեջ, հավանաբար, եղել են հնագույն նմուշներ, գուցե և Անի քաղաքի գաղթերից մնացած, որոնք անհետ կորստյան են մատնվել: Կարպետը գործ է ածվել որպես ննջեցյալի պատան: եղել են նաև աղոթքի կարպետներ: XIX-XX դդ.համարյա բոլոր գյուղերում գործվել են գորգեր ու կարպետներ: Կարպետը զարդարել է միջակ և չքավոր տնտեսությունների բնակարանները:

Խուրջինը եղել է տարբեր չափսերի:Ամենամեծն իշախուրջինն է, որի մի աչքում տեղավորվում էին խնոցին, մյուսում՝ կաթսան կամ այլ իրեր: Անկողնապարկն օգտագործվել է հագուստ, անկողին, գորգ, կարպետ փոխադրելու համար: Աղաքսակներում պահել ու սար են տեղափոխել երկանքով աղացած աղը: Նման ձևով աղը պահպանել են խոնավությունից: Գդալ-ամանները խոհանոցի անհարժեշտ մասն են կազմել, որի աչքերում կարելի էր տեղավորել 50-100 գդլ:

Օտար և հայկական աղբյուրները որքան էլ սակավ, այնուամենայնիվ վկայում են , որ կարպետագործությունը Հայաստանում հնուց ի վեր եղել է,գեղեցիկ ու թանկարժեք զարդարանքի բնագավառում:

Այսպիսով 19-20-րդ դարերում և դրանից վաղ կարպետները հայկական կենցաղում կիրառվել են զանազան ձևերով և գուցե այդ է պատճառը, որ մենք այսօր ունենք այդքան տարատեսակ կարպետներ: Եվ յուրաքանչյուր կարպետ արտահայտում է իր ստեծման վայրի առանձնահատկությունը, պատմությունը և կարելի է ասել նաև իրենց կենցաղը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կիրառական արվեստի հարուստ ճյուղերից է կարպետագործությունը:Դեռևս դարերի խորքից մեզ հասած հայ ժողովրդի ավանդական արվեստների մեջ իր հատուկ տեղն ունի կարպետագործությունը:

Այսպիսով մեր ուսումնասիրության ընթացքում ծանոթացանք յոթ խմբի և մի քանի ենթախմբերի պատկանող կարպետների և կարպետային գործվածքների: Այդ փաստերը ցույց են տալիս, որ կարպետագործությունը բազմաթիվ զարդաձևերով հարուստ մի բնագավառ է, որի մշակողներն ու պահպանողները եղել են հայ ժողովրդի ստեղծագործ զավակները, մասնավորապես հարսներն ու աղջիկները: Հայկական կարպետները, իրենց զարդանկարների առանձնահատուկ ձևերով, գույների դասավորությամբ, թելերի, գործվածքի կատարյալ որակով, ճիշտ չափերով, խոսում են իրենց ստեղծագործողների մեծ շնորհքի ու կարողությունների մասին: Ճիշտ է, հայտնի կարպետագործներից շատերը անգրագետ են եղել, աշխատել են ամենավատ պայմաններում, սակայն ցուցաբերել են բնատուր նուրբ ճաշակ, մեծ վարպետություն, անսպառ երևակայություն և շնորհք:

Երբ դիտում ես կարպետագործուհու աշխատանքը, նայում նրա գունավոր թելերի տեղադրմանը, ձեռքերի արագ շարժումներին, թվում է թե նկարը գտնվում է նրա մտքում, իսկ մատները ծանոթ լինելով նկարին, հմտորեն լույս աշխարհ են հանում նրա մտքի լուսավոր ծնունդը: Ամեն մի ժողովուրդ ունի իր ստեղծագործությունը, արվեստի իր ճյուղերը: Իմ թված հայկական կարպետագործության յոթ ճյուղերն էլ՝ իրենց ենթաճյուղերով կերտել ու պահպանել են մի յուրահատուկ դեկորատիվ արվեստ՝ ազգային միասնական ոճով ու զարդարվեստային հարուստ ավանդույթներով: Կարպետը XIX-XXդդ.առևտրի առարկա չդարձավ, մնաց որպես կենցաղի դեկորատիվ ու կրիառական զարդարանք գյուղերում ու ոչ հարուստ ընտանիքներում: Կարպետագործությունը համեմատաբար զերծ մնաց տարբեր ոճերի խառնուրդից և շարունակեց իր ինքնուրույն զարգացման ուղին: Այդ է պատճառներից մեկը, որ կարպետագործությունն ավելի անաղարտ է պահել ազգային ոճը, ավանդական զարդանկարները, թելերի տեսակները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Առաքելյան Բ. , Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., Երևան, 1958, 267էջ

2.Աբրահամյան Վ.,Արհեստները Հայաստանում 4-8-րդ դդ.,Երևան,1956թ.,290 էջ

3. Բեդուկյան Ջ., Հայկական կարպետներ եվ կարպետագործ գործվածքներ. կառուցվածքի ու զարդահորինվածքի համեմատական ուսումնասիրություն, հայկական հանգույց. գորգարվեստի ավանդույթները, միջազգային գիտաժողով, զեկուցումների դրույթներ, էջ 23

4.Դավթյան Ս. , Հայկական կարպետ, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ, 1975,67էջ

5.Դավթյան Ս., Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմությունից, Երևան, Հայկական ՍՇ. ԳԱ., 1981, 179 էջ

6.Թենուրճյան Վ.,Գորգագործությունը Հայաստանում, Երևան,ՀՍՍՌ.ԳԱ ., 1955,230 էջ

7. Պապիկյան Կ., Հայկական կարպետներ և գորգեր, Երևան, Զանգակ -97, 2009, 80 էջ

8. Պողոսյան Աշ., Հայոց կարպետագործության մշակույթը, Երևան, 2003 թ.,22 էջ

9. Манандян Я. , ,,О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен" Ереван,1954, 107 ст.

10.Степанян Н.,Искусство Армении:Черты историко-хыдожественного развития.-М.:Советский хыдожник, 1989.-312ст.

11.www.carpets.evolution.com.

12.www.Karpetitesakner.org.

13. https://hy.wikipedia.org/Կարպետ

ՀԱՎԵԼՎԱԾ

Նկ.1. Կարպետ. Արցախ –Սյունիք

Նկ.2. Կարպետ. Նովար-զուար (Դիլիջան)

Նկ.3 Կարպետ.. Ջեջիմ (Շամշադին)

Նկ.4. Կարպետ Լենինականից (սեփ. Ս. Օզնեցյանի)

Նկ.5 Կարպետ (Դիլիջան Ա. Ֆրանգուլյանի)

Նկ.6 Խուրջին (սեփ. Օ. վարդանյանի)

Նկ.6 Խուրջին

Նկ.7 Անկողնապարկ (Շամշադին.սեփ.Ա.Աթաբեկյանի)

Նկ.8 Անկողնապարկ (Լեռնային Ղարաբաղ)

Նկ.9 Կարպետ.Ջիլի

Նկ.10 Կարպետ-Զանգեզուր

Նկ.11Կարպետ. Լոռի

Նկ.12 Կարպետ. Արցախ-Սյունիք

Նկ 13.Աղքսակ

Նկ.14 Աղքսակ